

ՀՈՒՆՎԱՐ 2024

**ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	3
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	8
2. Առևտրային տնօրինություն	9
2.1. Բաժանորդների տվյալներ	9
2.2. Հասույթ	10
2.3. Գանձում	11
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/	11
2.5. Ջրաչափեր	12
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	13
3. Տեխնիկական տնօրինություն	14
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	14
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	15
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	18
3.4. Ջրատար համակարգի բարելավում	18
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	18
3.6. 1-85 թեժ գիծ	19
4. Լրատվական ծառայություն	20
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	22
5.1. Դասընթացներ/սեմինարներ	22
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	23
5.3 Արտադրական վտանգավոր օբյեկտների կոնսերվացման վկայագրերի մշակման և տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ	24
5.4. Վեոլիա Գրուպի ԲՆԿ ստանդարտների ինքնազնահատման, ընկերության համակարգում ներդրման, նոր ԲՆԿ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ	24
5.5. ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ	24
5.6. Բժշկական զննություններ և հետազոտություններ	24

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ՋՐԱՄՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Երևան» ՇՏ սպասարկման տարածքում իրականացվել են վթարա-
որոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն
ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Քաղաք Երևան

■ Մուշակյան թաղամաս, 4-րդ փողոցում գտնվող ՕԿՁ տարածքից դուրս եկող քայքայված $d=100$ մմ $L=80$ զձ/մ
և $d=80$ մմ $L=80$ զձ/մ ջրագծերը «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել են $d=110$ մմ
 $L=80$ զձ/մ և $d=80$ մմ $L=90$ զձ/մ պոլիէթիլենային խողովակներում: Միացման հանգույցի հորում փոխարինվել են
 $d=100$ մմ և $d=80$ մմ փա-
կանները: Կատարված
աշխատանքների արդյուն-
քում հարակից տարածք-
ների ջրամատակարար-
ումն իրականացվում է
անխափան



Քաղաք Գյումրի

■ Գյումրի քաղաքի Անի թաղամասում նոր անցկացված ջրագծերի միացման, փոխկապակցմանը
գուգահեռ, Շիրակ տեղամասի հետ համատեղ ուսումնասիրվեց և հայտնաբերվեց մի քանի կորած դիտահորեր
փականային հանգույցներով: Խցափակման արդյունքում շահագործումից հանվեց թաղամասի մի հատվածի
հին ջրամատակարարման ցանցի ջրագծերը, մասնավորապես Պ. Սևակ փողոցից Ե. Չարենց փողոց, 3-րդ,
5-րդ և Շահինյան փողոցներով պարփակված հատվածը: Արդյունքում, քայքայված $D-150-300$ մմ ջրագծերի վրա
ընդհանուր չափված ջրաքանակներով, խցափակումից հետո տնտեսվեց մոտ $Q=15$ լ/վ ջրաքանակ:



Գյուղ Ամասիա

■ Շիրակ տեղամասի Ամասիա գյուղում Շիրակ տեղամասի հետ համատեղ գաղտնի վթարի հայտնաբերման ժամանակ ուսումնասիրվեց տվյալ վթարված $D=100$ մ պողպատե ջրագիծը, որն ըստ ուսումնասիրության որոշվեց հանել շահագործումից: Արդյունքում, քայքայված $D=100$ մ ջրագծի խցավակումից հետո տնտեսվեց մոտ $Q=1,4$ լ/վ ջրաքանակ:





Քաղաք Սևան

■ Նալբանդյան փողոցում Սևան ՇՏ-ի աշխատակիցների հետ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվեց վթար $D=100$ մ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q=2$ լ/վ ջրաքանակ



Քաղաք Երևան

■ Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Նաիրի Զարյան 21 շենքի բակում $D=100$ մ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q=6$ լ/վ ջրաքանակ:



■ Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Խաչատրյան 1-ին նրբանցք 2-րդ շենքի հարևանությամբ: Ներանցման միջոցով կառուցվեց $L=40$ մ, $D=110$ մ ՊԷ և $L=8$ մ, $D=63$ մ ՊԷ խողովակներ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q=5$ լ/վ ջրաքանակ:

■ Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Դեմիրճյան 40 շենքի մոտ, պոմպի ելքի $D=50$ մ պողպատե ջրագծի վրա, դիտահորի մեջ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q=5$ լ/վ ջրաքանակ և էլեկտրաէներգիա:




■ Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Շիրազ 34 հասցեի հարևանությամբ անցնող $D=110$ մ ՊԷ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q=35$ լ/վ ջրաքանակ:

■ Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Դավթաշեն 4-րդ թաղամաս 31-րդ շենքի հարևանությամբ անցնող D=200մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 3լ/վ ջրաքանակ:



■ Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Արմին Վեգներ 5 շենքի հարևանությամբ անցնող D=200մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 5լ/վ ջրաքանակ:

■ Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Սեբաստիա 141/2 շենքի մոտ, պոմպի ելքի D=100մմ պողպատե ջրագծի վրա, դիտահորի մեջ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=3,5լ/վ ջրաքանակ և էլեկտրաէներգիա:



■ Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Քաջազունի 6 շենքի տակ, D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=11լ/վ ջրաքանակ:

■ Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Պուշկին 60 հասցեի պոմպակայանից սնվող, Փարպեցի 11ա շենքի D=50մմ պողպատե մուտքագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=1լ/վ ջրաքանակ և էլեկտրաէներգիա:



■ Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Գրիգոր Լուսավորիչ 8 հասցեում, Ֆրանսիայի դեսպանատան մուտքագծի, D=100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=3լ/վ ջրաքանակ:

■ Էրեբունի տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Ավանեսով 7/2 շենքի դիմաց, D=80մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=5լ/վ ջրաքանակ:



Գեղարքունիքի մարզ

■ «Մևան» տեղամասի աշխատակիցների կողմից Սարգիս Սևանեցի 15 շենքի հարակից խաչմերուկում իրականացվել են $d=300$ մմ $L=18$ գծմ պեթ ծալքավոր խողովակի մոնտաժման աշխատանքներ, տեղադրվել է թվով 2 դիտահորի պատի օղակ, կատարվել է հատակի բետոնացում, տեղադրվել է դիտահորի ծածկ:



Արմավիրի մարզ

■ «Արմավիր» տեղամասի աշխատակիցների կողմից Բաղրամյան համայնքը սնող $d=200$ մմ $L=85$ գծմ վթարային վիճակում գտնվող պողպատե ջրագիծը, որն անցնում էր քարհանքի տարածքով և հաճախակի լինում էին գաղտնի վթարներ փոխարինվել է $d=200$ մմ պեթ խողովակով, ինչի արդյունքում տնտեսվել է 2լ/վրկ ջուր:



Հունվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	993
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	16803
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	14216
Հոսակորուստի որոնում կորեյլատորով	մ	710
Ջրաչափական հանգույցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	124
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1001
Կառուցված ջրագիծ	մ	2264
Կառուցված կոյուղագիծ	մ	251.4
Վերացված գաղտնի վթարներ	հատ	12
Փոխարինված փական	հատ	117
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	229
Մաքրված դիտահոր	հատ	1915
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	9.1
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	650
Ջրահեռացման ցանցում	հատ	1313
Պումպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Հունվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	739	678	929

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	179	1	2	0	0	0	9	0	0	3	194
Փոխարինված	203	10	3	0	4	5	7	1	1	2	236
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	196	3	0	0	2	0	3	1	1	0	206
Ընդամենը	578	14	5	0	6	5	19	2	1	5	636

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 636 ջրաչափ: Կատարված աշխատանքների 91%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում ւ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արարկիր	655	289	65
2	Քանաքեռ-Ջեյրուն	0	262	0
3	Մաշտոց	0	264	20
4	Շահումյան	0	258	3
5	Շիրակ	1269	421	15
6	Արթիկ	0	95	0
7	Ապարան	0	67	0
8	Ալավերդի	0	36	42
9	Աշոցք	0	2	0
10	Բերդ	180	7	0
11	Իջևան	0	52	0
12	Լոռի	0	191	0
13	Նոյեմբերյան	0	11	0
14	Սպիտակ	0	19	0
15	Ստեփանավան	1248	20	0
16	Թալին	0	15	50
17	Տաշիր	0	12	0
18	Չարենցավան	0	98	0
19	Աբովյան	0	130	6
20	Հրազդան	0	75	12
21	Կենտրոն	100	268	0
22	Հյուսիս	150	356	62
23	Հարավ	0	364	6
24	Էրեբունի	0	173	0
25	Արմավիր	0	185	0
26	Արտաշատ	0	158	0
27	Էջմիածին	0	177	0
28	Աշտարակ	1890	30	0
29	Արարատ	0	77	0
30	Մասիս	0	81	24
31	Գավառ	0	38	0
32	Սևան	1870	107	18
33	Մարտունի	0	31	0
34	Վարդենիս	0	8	0
35	Ճամբարակ	0	25	0
36	Դիլիջան	0	52	12
37	Վայք	530	20	0
38	Եղեգնաձոր	0	14	0
39	Ջերմուկ	0	52	0
40	Սիսիան	0	27	6
41	Գորիս	0	36	0,5
42	Կապան	846	83	8
43	Մեղրի	0	42	0
	Ընդամենը	8738	4728	349

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

■ Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանում պոմպերի հորի մեջ վթարվել էր d=150 մմ տրամագծի մղման խողովակը, որը վերբանորոգվեց եռակցման միջոցով: Էլ վահանակում շարքից դուրս էր եկել եռաֆազ թողարկիչներից մեկը և ավտոմատ անջատիչը, որոնք փոխարինվեցին և այժմ էլ վահանակը աշխատում է բնականոն ընթացքով: Կատարվեց նաև հակադարձ փականների մաքրում, որոնք մասնակի խցանվել էին:

■ Գավառի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով և այժմ օդամուղը աշխատում է բնականոն ընթացքով: Կարգաբերվեցին նաև մանր ճաղավանդակների քերիչ սանրերը, որոնք աշխատանքի ընթացքում խախտվել էին:

■ Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում խցանվել էր մանր տիղմի մամլիչը, որի պատճառով տիղմը առանց ջրազրկման լցվում էր կոնտեյներ: Ի վերջո այն ապամոնտաժվեց և մաքրվեց կուտակված տիղմից, որի արդյունքում այժմ սարքավորումները աշխատում են բնականոն ընթացքով: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	62,638	28,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	58,871	18
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	177,397	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	76,318	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	128,397	9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	14,013	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	13,134	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	15,700	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	6,350	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 198 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 146 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.02.2024 թվականի դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 615,076 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2024թ. հունվար ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	676,598	585,947	86,6
	Իրավաբանական անձ	32,464	29,129	89,7

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	747,596	602,652	80,6
	Իրավաբանական անձ	37,975	27,735	73,0

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 809 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Մեան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հունվար ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3048 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 01.2024
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1522	880	247	2649
	Իրավաբանական անձ	291	80	28	399
	Ընդամենը	1813	960	275	3048


Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հունվար ամսին փոխարինված 3048 ջրաչափերի մոտ 41 %-ը (կամ 1235 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 162,082 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2024թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Ստուգաչափված ջրաչափ



Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Հունվար ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,190 մլն. դրամ (90 %)։ Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն։

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ։

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում։

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՆՁՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը։ Հունվար ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 155 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 32.2 մլն դրամ ընդհանուր գումարով։

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն։

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը։

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2023թթ. ընթացիկ դրեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
30,724	4,179,560,520	18,339	2,097,927,512	939	210,619,147	12,385	2,081,633,008	11,135	1,321,088,933

Բնչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 60 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը մերժված։

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.02.2024թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	11,231	2,460
Բնակիչ-բաժանորդներ	7,917	1,706
Իրավաբանական անձեր	3,314	754

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները։ Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը։

Շուրջ 390.8 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով։ Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը։

2024 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.02.2024թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	718,409	601,614	83.74	36,928	27,727	74.08
	Առանց ջրաչափի	29,187	1,038	3.56	1,047	8	0.76

Տվյալների բազայում 01.02.2024թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	889,649	379,653	42.67	40,525	6,941	17.13

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 4801 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 703 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:

ՊԿԱՄ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2473	2031	81.9
գ.Պոռշյան	1708	1175	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	6018	1959	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիրը:
 Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 18265, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 16511, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 4647, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5477, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2762, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4601 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 7867 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:
 Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	231	104,116	18,927,961

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հունվար ամսվա շարունակականության տվյալները կազմում է 96.4%, ինչը նույնն է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:



Ջրամատակարարման շարունակականություն Երևան




Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 47 ՃԿՓ-ներ:

Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.






Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2024թ-ի հունվար ամսին 2023թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 250լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսն ավելացել է 14 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 1443 կվտ.Ժ (0,28%), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 5 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 5 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 1834 կվտ.Ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կնվազեր 3277 կվտ.Ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում այց է կատարվել 109 հասցե, գույքագրվել է 67 էլ. հաշվիչ: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՌԻՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) և ՕԱՇ (օր առաջ շուկա) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է համապատասխանաբար 7,178,619 ՀՀ դրամ և 1,490,068 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում: «ՀԷՑ» ՓԲԸ-ից Հալաբյան Արեյան փողոցների խաչմերուկում ստեղծվող հոսքաչափի համար, ձեռք է բերվել տեխնիկական պայման:

Պումպակայանների ուսուճասափրություն

Թվով 32 խոշոր պումպակայանում կատարվել են ուսուճասափրություններ, որոնց արդյունքում 26 պումպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 198 բակային պումպակայանում կատարվել են ուսուճասափրություններ, որոնց արդյունքում թվով 146 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինչպես նաև տեղամասին կամ գոտիաորման բաժնին է փոխանցվել թվով 3 հասցեների ջրագծի վթարներ.

- Դեմրճյան 40 (Ar-156)
- Սեբաստիա 141/1 (Sh-4)
- Հակոբյան 1 (Ar-145)

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում երկու հասցեում տեղադրվել են ինվերտորային համակարգեր.


- Վրացյան 71/1 (Ke-83)
- Արցախի 14 (Er-5)

Ինվերտորային պոմպի տեղադրում

Հաշվետու ամսում քսանինը հասցեներում տեղադրվել են ինվերտորային պոմպեր.

- | | |
|-------------------------------|------------------------------|
| ■ Խանջյան 15 (Ke-7) | ■ Սարգսյան 7 (Ma-17) |
| ■ Մանթաշյան 4/3 (She-95) | ■ Շինարարներ 10/1 (Ma-7) |
| ■ Տերյան 4ա (Ke-12) | ■ Սունդուկյան 15ա (Ar-31) |
| ■ Վարդանանց 5ա (Ke-9) | ■ Շինարարներ 15/1 (Ma-10) |
| ■ Տերյան 56 (Ke-26) | ■ Համբարձումյան 47 (Ar-54) |
| ■ Արցախի 20/1 (Er-43) | ■ Գյուլբեկյան 2/1 (Ar-123) |
| ■ Արշակունյանց 52/1 (She-108) | ■ Փափազյան 16բ (Ar-100) |
| ■ Թումանյան 9ա (Ke-37) | ■ Արծրունի 90 (Ar-47) |
| ■ Թադևեսյան 12/1 (She-139) | ■ Սարգսյան 2 նրբ. 8շ (Ma-12) |
| ■ Աղայան 7,9 (Ke-25) | ■ Գրիբոյեդով 2/4 (Ar-82) |
| ■ Սայաթ-Նովա 20 (Ke-16) | ■ Ավետիսյան 80 (Ar-104) |
| ■ Արաբկիր 25փ. 2շ (Ar-91) | ■ Հակոբյան 12 (Ar-133) |
| ■ Ուլնեցու 49 (QZ-5) | ■ Հակոբյան 7 (Ar-139) |
| ■ Ավետիսյան 70 (Ar-56) | ■ Կոմիտաս 7/1 (Ar-116) |
| ■ Բաբայան 34 (Ar-88) | |

Տեղադրված ընդհանուր 115 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլեկտրաէներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է 18 172 կՎտ/ժամով, կամ 8%-ով:




Խոշոր պումպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

■ Հաշվետու ժամանակահատվածում 24 խոշոր պումպակայաններում էլեկտրաէներգիայի մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան


■ 2024 թվականի հունվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 6 917 կՎտ/ժամ (0,63 %) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



■ Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսն ավելացել է 29 885 ԿՎտ/ժ/ամիս կամ 1.64 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

■ Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է 87 130 ԿՎտ/ժամ 2.03%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են հունվար ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
ՃԿՓ-ների, հոսքաչափերի տվյալների բազայի թարմացում	թարմացում	1
«ԱՏՀ» բազայում առկա պոմպերի և միացումների ուղղում, կողավորում	կողավորում	1
2017, 2020-2023թթ ժամանահահատվածում «ՋԻՆՋ» ընկերության կողմից տրամադրված կատարողական փաստաթղթերի թվայնացում և թարմացում	տարիներ	5
135 տեխնիկական պայմանների թվայնացում (440 բաժանորդ)	տեխպայման	135
SCADA համակարգում առկա կետային տեղեկատվություն տեղորոշում և համապատասխանեցում «ԱՏՀ» բազային	կետեր	100
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2738
«ԱՏՀ»-ում առկա մարզերի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9525
«Ինտերակտիվ» համակարգում նոր կետերի ավելացում	կետ	904
Նոր տրամադրված գործիքակազմի օգնությամբ կատարվել են ակնհայտ շեղված թվով 7234 բաժանորդների գրոյացում	բաժանորդ	7234
«Արևելք» և «Արևմուտք» ՇՏ-ների կողմից 2023թ-ի դեկտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և կոյուղատար ցանցում կատարած աշխատանքների համակարգում, համապատասխան ծագրերի կազմում և մուտքագրում «ԱՏՀ»	աշխատանքների համակարգում	1
Տեխնիկական պայմանների դիմումների վերաբերյալ դիմորդի տարածքի տեղադիրքի թվայնացում, կազմվում է քարտեզ՝ տարածքում առկա կոմունիկացիաներով, որը մուտքագրվում է փաստաթղթաշրջանառություն: Հաշվետու ժամանակահատվածում ամսին կատարվել է 152 գործի թվայնացում՝ 256 բաժանորդ	բաժանորդ	256
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1845
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1854

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

■ Գառնու ձորում հայտնաբերվել է վթարված թվով 3 անհայտ միացում, որոնք ապամոնտաժվել են:



■ Արին-Բերդ Խարբերդ ջրատարի վրա հայտնաբերվել է վթար ≈ 7 լ/վ մեծությամբ: Վթարը վերացվել է:

Կատարվել են ջրաքանակի չափումներ Արզական-Գյումուշ, Արզնի 1 և 2, Գառնի-Երևան և Կաթնաղբյուր 2 ջրատարների վրա:

3.5. ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության» կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

■ Արզական սանիտարական գոտու տարածքում N 20 կապտաժային կառուցվածքի ելքի խողովակաշարի վրա տեղադրվել է DN250 մմ տրամագծի KHRONE ֆիրմայի արտադրության էլ. մագնիսական հոսքաչափ:




Իրականացված աշխատանքների ընթացք



Սառույցների հալեցման աշխատանքներ

■ Դիլիջան, Վանաձոր, Բերդ, Կապան և Մեղրի համայնքների անխափան ջրամատակարարումն ապահովելու նպատակով խմելու ջրի մաքրման կայանների գետային ջրընդունիչներում գրեթե ամեն օր իրականացվել են սառույցների կտրման աշխատանքներ

■ Արգել քլորակայանում վերանորոգվել է ջրի վարակազերծման համար նախատեսված հեղուկ քլորով աշխատող դոզատոր սարքավորման գլխիկը:



Վերանորոգված գլխիկ



Իրականացված աշխատանքների լուսանկարներ

■ Կապս քլորակայանում ջրի վարակազերծման գործընթացի շարունակականությունը Ղազանյի, Կրասար, Զուգադյուր ջրաղբյուրների ջրերը վարակազերծող քլորակայանում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

■ Վերանորոգվել է հեղուկ քլորով աշխատող վակուում կարգավորիչը

■ Համակարգին սնուցող քայքայված հեղուկ քլորի ձկուն խողովակաշարը և աղոս փականը փոխարինվել է նորով:

■ Սառնաղբյուր քլորակայանում հետագա շահագործման համար ոչ պիտանի հեղուկ քլորով աշխատող վակուում կարգավորիչը փոխարինվել է նորով:



Իրականացված աշխատանքների լուսանկարներ

3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 31771 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 9319 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 7382 զանգ (79,2%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 1937 զանգ (20,8%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 22452 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 16130 զանգ (71,8%), իսկ մարզերինը՝ 6322 զանգ (28,2%):

■ 2023թ. հունվար ամսվա համեմատ՝ 2024թ. հունվար ամսին 5,24%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 5,14 %-ով:

■ 2023թ. հունվարի համեմատ՝ 2024թ. հունվար ամսին 1%-ով նվազել է ֆիքսված զանգերի քանակը, 11%-ով ավելացել է 5 բույսերից ավել զանգերի քանակը և 3%-ով ավելացել է հայտարարությունների լուսուժն ավտոմատ ծառայության միջոցով:

Ջրամատակարարման գրաֆիկի բողոքներ

■ 2023թ. հունվարի համեմատ՝ 2024թ. հունվար ամսին 20,94%-ով նվազել են ջրամատակարարման բողոքները:

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2023 Հունվար	2024 Հունվար	
Ստորաբաժան	Ընդամենը	8855	9319	5.24%
	Երևան	6622	7382	11.48%
	Մարզեր	2233	1937	-13.26%
Շահագործում	Շահագործում	23669	22452	-5.14%
	Երևան	16017	16130	0.71%
	Արարիկիր	2409	2724	13.08%
	Քանաքեռ-Զեյթուն	1420	1472	3.66%
	Մաշտոց	2183	2337	7.05%
	Շահումյան	1451	1670	15.09%
	Շենգավիթ	2876	3258	13.28%
	Կենտրոն	2995	2131	-28.85%
	Հյուսիս/Ավան Լոր Լորթ/	1249	1372	9.85%
	Էրեբունի	1434	1166	-18.69%
	այդ թվում կոյուղու վթար	184	115	-37.50%
	այդ թվում դիտահորի խցանում	5853	6330	8.15%
	ՄԱՐԶԵՐ	7652	6322	-17.38%
	Հարավ	3519	3649	3.69%
	Հյուսիս	4133	2673	-35.33%
	այդ թվում կոյուղու վթար	28	85	203.57%
այդ թվում դիտահորի խցանում	2857	3554	24.40%	
Ընդամենը	32524	31771	-2.32%	

ՀՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



«Վեոլիա Ջուր» ընկերությունը տարին մեկնարկեց համալրված ավտոպարկով: Հաշվետու ամսում ընկերությունը ձեռք բերեց «KAMA» մակնիշի չինական 20 բեռնատար նախատեսված «Հյուսիս» և «Հարավ» շահագործման տնօրինությունների տեղամասերի վթարային բրիգադների համար: Մեքենաների տարողունակ թափքում հնարավոր է տեղավորել գործիքներ, եռակցման ապարատներ ու ծախսանյութեր, անձնակազմի համար էլ նախատեսված է հարմարավետ երկշաք խցիկ: Այս կարևոր իրադարձությունը լուսաբանվեց Հանրային կապերի ծառայության կողմից և ֆեյսբուքյան, և կայքէջերում:



Ընդհանուր առմամբ, Հանրային կապերի ծառայությունը շարունակել է համակարգում իրականացվող աշխատանքների լուսաբանումը, հատկապես հանրապետությունում տեղացած առատ ձյան և ցուրտ եղանակի օրերին՝ ցույց տալով ՎեոլիաԹիմի գիշերցերեկ կատարած աշխատանքները: Այս համատեքստում լուսաբանվել է «Ծաղկաձոր» և «Արգնի» պոմպակայանների վթարավերացման աշխատանքները, երբ Էլեկտրական համակարգերի կառավարման ծառայության մասնագետները, չնայած բարդ ու ձնառատ տեղանքին, ճանապարհի մի հատվածը մեքենաներով, մյուսը՝ ոտքով

հասել են պոմպակայաններ և վերացրել խնդիրները: Այդ օրերին ջրաքանակի պակաս էր նկատվել նաև Լոռու մարզի Ձորագետ, Ձորագյուղ համայնքներում, Սպիտակ քաղաքում ու հարակից 4 գյուղերում, Դիլիջանում, Սյունիքի մարզի Հացավան գյուղում: Տեղացած առատ ձյան և սաստիկ ցրտի հետևանքով բնակավայրերը սնող ջրաղբյուրները, կապտաժներն ու ջրագծերը սառցակալել էին: Քանի որ սարերում ձյան շերտը բավականին հաստ էր, ճանապարհներն էլ անանցանելի, ՎեոլիաԹիմը կես ճանապարհները անցել է մեքենաներով, անանցանելի հատվածները ոտքով և բոլոր դեպքերում նույնիսկ օրեր շարունակ սարերում գտնվելով կարողացել է վերացնել խնդիրներն ու ապահովել համակարգի անխափան ջրամատակարարումը:

Լուսաբանվեց նաև անցյալ տարի Զվար ջրընդունիչից դեպի «Զվար» մաքրման կայան կառուցված 360 գծամետր ջրատարի միացման աշխատանքները «Այրիչայ-Ագարակ» ջրատարին, որտեղ անհամեմատ մեծ ջրաքանակ կա, այդկերպ լուծելով ամռանն ու ձմռանը Մեղրի և Վարդանիձոր բնակավայրերի ջրամատակարարման խնդիրները:

Ամանորյա օրերին հանրապետության տարբեր շրջաններում ջրագծերի և կոյուղագծերի վթարներին, բաշխիչ ցանցում կարգավորման խնդիրներին ՎեոլիաԹիմը արձագանքել է օպերատիվորեն՝ կենցաղային քիչ



անհարմարություններ պատճառելով սպառողներին: Առանձին հրապարակումներ եղան «Տավուշ» 273 մմ-ոց պողպատյա ջրատարի վայրկյանում 30 լիտր ջրի կորստով վթարին, Մեղրի քաղաքը սնուցող «Զվար-Մեղրի» 219 մմ-ոց մետաղական խողովակաշարի և այլ վթարներին:

Ի հավելումս այսպիսի վթարների, որպեսզի ջրանջատումները սպառողների մոտ բացասական և թուրքընկալում չառաջացնեն, կրթական նպատակով հրապարակեցինք մի կարևոր նյութ, որտեղ սպառողներին բացատրում էինք վթարային և պլանային ջրանջատումների պատճառներն ու տարբերությունները:



Սոհասարակ որևէ աշխատանք լուսաբանելիս Հանրային կապերի ծառայությունը ոչ թե միայն տալիս է տեղեկատվություն, այլև փորձում դրա միջոցով սպառողներին ցույց տալ այն արդյունքները, որոնք ընկերությունը ունենում է այդ աշխատանքներից հետո: Օրինակ որ «Էլեկտրական համակարգերի կառավարման» ծառայության շնորհիվ «Մաքրավան» պոմպակայանի մաշված բանվորական անիվը փոխելուց հետո հնարավոր է եղել խնայել 50 կվտ/ժ էլեկտրաէներգիա և դրան զուգահեռ ավելացնել ջրի արտադրողականությունը: Նախկին վայրկյանում 165 լիտր ջրաքանակի փոխարեն այժմ պոմպակայանը արտադրում է 170 լիտր, իսկ դա նշանակում է ավելի մեծ քանակի ջուր է մղվում Հրազդան քաղաքի նշված թաղամասեր: Կամ որ

շահագործման տեղամասերի կողմից Երևանում, Հրազդանում, Թաիրովում, Վանաձորում վթարների վերացման արդյունքում, բացի ջրամատակարարման բարելավումից, հնարավոր է եղել տնտեսել մեծ ջրաքանակ: Իսկ առհասարակ ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառումը շատ կարևոր է ջրամատակարարման համակարգում: Այս թեմայով արված հրապարակումով ցույց ենք տվել, որ դրանց միջոցով է հնարավոր լինում փնտրել և գտնել հոսակորուստները, հայտնաբերել «գաղտնի վթարները», երբ ջուրը հոսում է ընդերք և տևական ժամանակ աննկատ ժամում: Տեխնիկական այդպիսի միջոցների օգնությամբ անցյալ տարի ՎեոլիաԹիմը կարողացել է հայտնաբերել 710 ստորգետնյա «գաղտնի վթար» դադարեցնելով վայրկյանում 2061 լիտր ջրի կորուստ: Այս ուղղությամբ աշխատանքներն այս տարի էլ ինտենսիվ շարունակվում են. հունվար ամսին Երևանի Կենտրոն, Էրեբունի, Դավթաշեն, Ավան, Արաբկիր վարչական շրջանների տարբեր հասցեներում, Աշտարակ քաղաքում Գոտիավորման խմբի մասնագետները հայտնաբերել են գաղտնի վթարներ, որոնց վերացման արդյունքում կանխվել է վայրկյանում շուրջ 25 լիտր ջրի կորուստ: Առանձին լուսաբանվեց Երևանի Խաչատրյան 1-ին նրբանցքի 2-րդ շենքն ու հարակից տները սնուցող ջրագծի վրա ուլտրաձայնային սարքերով 2 գաղտնի վթարի հայտնաբերման դեպքը: Երբ շահագործման տեղամասը խնդիրը լուծեց 48 գծամետր հատված հին ջրագծի մեջ նորի ներանցման մեթոդով:

Չնայած ձմեռը հարմար ժամանակահատված չէ նոր շինարարություն սկսելու համար, սակայն «Աշտարակ» շահագործման տեղամասը օգտվելով եղանակային լավ օրերից սկսեց Աշտարակ քաղաքի Գիտավան թաղամասը սնող 950 գծամետր վթարային ջրագծի վերակառուցման աշխատանքները: Քանի որ ջրագիծն անցնում էր Աշտարակ-Էջմիածին ճանապարհահատվածով և 4 մետր խորության վրա էր, բարդ էր այն սպասարկելը և անընդհատ տեղի ունեցող վթարները վերացնելը: Իսկ չափումները ցույց էին տվել, որ ջրագծից վայրկյանում կորում էր 5-7 լիտր ջուր: Օրերս արդեն կավարտվեն աշխատանքները, որի արդյունքում կհեշտանա ջրագծի սպասարկումն ու շահագործումը, կվերանան կորուստները, իսկ խնայված ջուրը կուղղվի հարևան թաղամասեր: Հունվար ամսին բազմաթիվ էին կոյուղագծերի խցանման և վթարման դեպքերը: Ընկերության շահագործման տեղամասերի մասնագետներն օրական տասնյակ խցանումների և վթարավերացման աշխատանքներ են իրականացրել: Գրեթե բոլոր դեպքերում սպառողների ոչ բարեխիղճ օգտվելու հետևանքով դիտահորերը լցվում էին կենցաղային աղբով և վերածվում աղբատարի: Նյութերը լուսանկարներով հրապարակելիս պարբերաբար շեշտել ենք, որ քանի դեռ կոյուղին օգտագործվում է որպես աղբատար, նման դեպքերն անխուսափելի են լինելու: Հաշվետու ամսվա պաշտոնական լուրն այն էր, որ 2023 թվականի 1000 խոշոր հարկատուների ցանկում Վեոլիա Ջուր ընկերությունը 37-րդն էր իր 7,071,210,000 դրամ ՀՀ բյուջե վճարած հարկերով: Եվս 2 մլրդ 724 մլն 478 հազար դրամ փոխանցվել է պետբյուջե որպես համակարգի վարձակալության վճար: Նշենք որ, 2022 թ.-ի համեմատությամբ ընկերությունը բարելավել է իր դիրքերը 42-րդից դառնալով 37-րդը:

Սպառողներին իրազեկելու նպատակով տեղեկացվել է նաև, որ ընկերության բաժանորդների սպասարկման գրասենյակներից մեկը նոր հասցե ունի: Նախկին Լվովյան 2 հասցեից ԲՄԳ-ն տեղափոխվել է Դավիթ Մալյան 2:

Հաշվետու ամսում Բանակի օրվա առթիվ հրապարակվեց շնորհավորանք, ինչպես նաև հրապարակումներ են եղել ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, թափուր աշխատատեղերի, ինչպես նաև վթարային ջրանջատումների մասին:

VEOLIA

77 պետբյուջե է վճարվել
7.071.210.000 77 դրամ
հարկ

#ՎԵՈԼԻԱՆԹՎԵՐՈՎ


ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

5.1. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ


■ Հաշվետու ամսում բաժնի 2 աշխատակիցները մասնակցեցին ՀՀ ՆԳՆ խիարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում անցկացված «Արտակարգ Իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում պատրաստվածության բարձրացման հարցերը» թեմայով դասընթացին՝ ավարտին ստանալով հավաստագրեր



2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.2. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

■ Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 6 քլորակայանում, 2 ՕԿՁ-ում, 1 ՋՄԿ-ում, 3 պոմպակայանում, 38 վարչական շենքում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

■ ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 43 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2024 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.3. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՆՍԵՐՎԱՑՄԱՆ, ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

■ Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և ելնելով համակարգերում տեխնածին վթարների կանխարգելման և բացառման, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում բաժնի կողմից մշակեց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձագիտական ընկերությանը տրամադրվեց թվով 2 քլորակայանի տեխնիկական անվտանգության վկայագիր՝ փորձաքննության աշխատանքների իրականացման նպատակով, որից հետո վերոգրյալ օրենքի պահանջների համապատասխան պետք է իրականացվի քլորակայանների տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:

■ Հաշվետու ամսում, ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներով, Ընկերության Գլխավոր Տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովը, ելնելով Ընկերության ջրամատակարարման համակարգերի կառավարման արդյունավետության բարձրացման, արդյունքում ՀՀ Շիրակի մարզի ք. Մարալիկ հասցեում գտնվող «Մարալիկ» քլորակայանի հետագա շահագործման ոչ նպատակահարմար լինելու հանգամանքից, իրականացրեց «Մարալիկ» քլորակայանի օրենսդրությամբ սահմանված կոնսերվացման աշխատանքները:

5.4 ՎԵՈՒԻԱ ԳՐՈՒՊԻ ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆՈՐ ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱՊՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

■ Հաշվետու ամսում ևս իրականացվել են Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ, ինչպես նաև ինքնագնահատման և Ընկերության համակարգում ներդրման աշխատանքներ:

5.5 ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՊՄ-ՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

■ ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների ձեռքբերման գործընթացը շարունակական է, և այդ առնչությամբ բաժնի կողմից պարբերաբար իրականացվում են կարիքների գնահատման և անհրաժեշտ քանակների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ:

5.6 ՀԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

■ ՈԱԱ բաժինը, հաշվետու ամսում, առաջնորդվելով ՀՀ կառավարության 27 մարտի 2003 թվականի N 347-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ աշխատողի առողջական վիճակի դինամիկ հսկողության, մասնագիտական հիվանդությունների կանխարգելման և դրանց սկզբնական նշանների ժամանակին հայտնաբերման, դժբախտ պատահարների կանխման ու աշխատանքի անվտանգության պահպանման, վարակիչ և մակարոնային հիվանդությունների տարածման կանխարգելման, հիվանդությունների հայտնաբերման նպատակով, Ընկերության թվով 4 աշխատողի համար կազմակերպեց պարտադիր բժշկական զննություններ և լաբորատոր հետազոտություններ:

«ՎԵՈՒԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադունցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am